ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

«Սոֆյա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի տնօրեն՝
Սոֆյա Մանուկյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ տիկին Մանուկյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Սոֆյա Մանուկյան Բաբկենի» ԱՁ -ի միջև 02.02.2024թ-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-10-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնմանվ - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

«Սոֆյա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սոֆյա Մանուկյան Բաբկենի» ԱՁ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը և այն համարելով լուծված 200622.24(երկու հարյուր հազար վեց հարյուր քսաներկու դրամ, քսամչորս լումա) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր տուժանքով սահմանված և պայմանագրի ապահովման 59670/հիսունինը հազար վեց հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 89505/ ութսունիը հազար հինգ հարյուր հինգ/ ՀՀ դրամ գումարները շահառուի 90000800664 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահնված ժամկետում ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Սոֆյա Մանուկյան Բաբկենի» ԱՁ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նեռառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանգրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ